

ՐԱՖՖԻՆ ԵՎ ԱՐԵՎԵԼԱՅԱՅ ՊԵՂԱՐԿԵՍԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼԵԶՈՒՆ

ՌՈԼԱՆԴ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հայտնի է, որ արևելահայ աշխարհաբարը, XIX դ. երկրորդ կեսերին մղված գրապայքարում հաղթանակ ապահովելով գրաբարի նկատմամբ, սկսում է դարդանալ երկու՝ ժողովրդական-գրական և ընտրողական-գրական ուղղություններով: Առաջին ուղղության ներկայացուցիչներն աշխարհաբարի նորմավորման ու գրականացման խնդրի լուծումը տեսնում են լեզուն ժողովրդաստակցական լեզվական տարրերով հագեցնելու մեջ, ի տարբերություն երկրորդ ուղղության ներկայացուցիչների, որոնք «...խուսափում են բարբառային բառերից, հատկապես բառային նոր փոխառություններից, բարբառներին դիմում են գերագանցապես ոճավորման նպատակով՝ հերոսների խոսքի մեջ, համեմատաբար շատ են օգտվում գրաբարից, ավելի հաճախ են դիմում բառային նորակազմություններին, աշխատում են քերականական շեղումներ թույլ չտալ...»:

Այս ամենը հանգեցնում է այն բանին, որ XIX դ. 70–80-ական թվականներին արևելահայ աշխարհաբարը գրական լեզու դառնալու ճանապարհին բառակազմի լուրջ փոփոխությունների է ենթարկվում: Այդ փոփոխությունների մեջ իրենց արժանի տեղն ունեն լեզվի զարգացման ընտրողական-գրական ուղղությունը գավանող Հայ մտավորականները, որոնց թվում իր «լեզվաշինարարությունը» առանձնանում է Հայ մեծ վիպասան Րաֆֆին:

Րաֆֆու գրական ստեղծագործությունը, մեր կարծիքով, ունեցել է լեզվական երկու փուլ՝ գրաբար և աշխարհաբար, որոնցից աշխարհաբար փուլն անցել է զարգացման երեք շրջան: «Սալբի» վեպը, որ հեղինակի գրական ստեղծագործությունների առաջնեկն է՝ ուսանողական տարիներին ստեղծված մի գործ, գրվել է գրաբար լեզվով, «... բայց, երբ 1858 թվականին երեքյակ սլաոմական «Հյուսիսայրայլը» տալով մեր լիտերատուրային մի նոր հոգի, մի նոր կերպարանք, այն ժամանակ և մենք զգացինք մեր սխալը, մեր վեպի հին լեզուն գեպի նորը փոխելով»¹: Սա նշանակում է, որ Րաֆֆին, գրիչ վերցնելով, ժամանակի մտավորականությունն այնքան հուզող գրաբար, թե՞ աշխարհաբար ընտրության հարցը, լուծում է հօգուտ գրաբարի: Սակայն հետագայում զգալով իր սխալը՝ Րաֆֆին ուղղում է այն՝ վեպի գրաբար լեզուն փոխելով աշխարհաբարի:

¹ Տե՛ս Գ. Բ. Զ ա հ ու կ յ ա ն և ուրիշներ. Հայոց լեզու. I մաս, Ա պրակ, Երևան, 1980, էջ 33:

² Ր ա ֆ ֆ ի. Երկերի ժողովածու 12 հատորով. հ. 2, Երևան, 1983–1991, էջ 83 (այսուհետև օրինակները առաջին թիվը ցույց է տալիս հատոր, երկրորդը՝ հրատարակության թիվը):

Այս հանգամանքը չափազանց կարևոր նշանակություն ունի Րաֆֆու համար, քանի որ դեռևս գրապայքարի այդ բուռն շրջանում նա փաստորեն գործնականում պաշտպանում է աշխարհաբարի դատը:

Այս շրջանը կարելի է համարել Րաֆֆու լեզվակողմնորոշման առաջին փուլ: Դեռևս ստեղծագործական վաղ շրջանից կողմնորոշվելով դեպի աշխարհաբարը՝ Րաֆֆին այնուհետև ստեղծագործական իր ողջ կյանքում տիտանական աշխատանք է կատարում արևելահայ աշխարհաբարի մշակման ու նորմավորման գործում:

Րաֆֆու գրական ժառանգության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աշխարհաբարով գրված նրա ստեղծագործությունների լեզուն, ինչպես նշվեց, կարելի է բաժանել երեք շրջանի. ա) մինչև 70-ական թվականներ, բ) 70-ական թվականներ և գ) 80-ական թվականներ:

Հայտնի է, որ մեծ վիպասանի գրական ստեղծագործական ճակատագիրը սերտորեն կապված է XIX դ. 70–80-ական թվականներին հայերեն հրատարակվող մամուլի այս կամ այն օրգանին աշխատակցելու հետ: Այդ օրգաններից առաջինը, որի հետ առնչվել է Րաֆֆին, Ստ. Նազարյանցի հրատարակած «Հյուսիսափայլ» ամսափուն է, որը մեծ ազդեցություն է ունենում ապագա մեծ գրողի թե՛ աշխարհայացքի, թե՛ գրական ճաշակի ձևավորման և թե՛ մանավանդ, լեզվակողմնորոշման վրա: Նա շուրջ մեկ տասնամյակ տարված էր ամսագրի լեզվով և ստեղծագործում էր հենց Հյուսիսափայլյան լեզվամանուսկրամբ:

Ասածի ցայտուն ապացույցը կարող է համարվել «Սալրի» վեպի օրինակը ոչ միայն այն առումով, որ վեպի լեզուն աշխարհաբարի փոխելը անմիջականորեն կապվում է ամսագրի հետ, այլև այն, որ այդ վեպն իր լեզվաոճական նյութով ամբողջությամբ շարադրված է «Հյուսիսափայլի» լեզվի նմանությամբ: Առանձնապես հետաքրքրական է վեպին կցված «Առաջաբանը», որը թե՛ լեզվական աստղծով, թե՛ իր առաջ քաշած գաղափարներով, կարծեք թե, «Հյուսիսափայլի» խմբագրությունից դուրս եկած մի հրապարակախոսական նյութ է: Ահա մի օրինակ. «Միտ դնելով այդ հանգամանքներին՝ մեք ավելի իրավունք չունեմք բողոքել հայերի անընթերցասիրության համար, վասնզի մեզանում խիստ սակավ էին այն գրքերը, որք կարողանային սնունդ տալ նոցա սրտերին և գրավել նոցա միտքերը: Մեր հին մատենագրությունքը յուրյանց գրաբար լեզվով անհասանելի են շատերին, մի քանի նոր թարգմանությունք, թեև աշխարհիկ լեզվով, դարձյալ չեն կարող հագեցնել նոցա հարցասիրությունը, որովհետև նոցանից շատերը՝ կամ դպրոցական գրքեր լինելով, վեր են հասարակ ժողովուրդի հասկացողությունից, և կամ մի քանի վիպասանականքը, ուրիշ ազգերի կյանքից առնվածներ լինելով, խորթ են» (2, 83, էջ 18):

Տիպիկ Հյուսիսափայլյան լեզու, որը նույնությամբ որդեգրել է սկսնակ վիպասանը: Ինչպես նշում է Լ. Եզեկյանը, «Առաջաբանի» մեջ գործադրված լեզուն աչքի է ընկնում հետևյալ յուրահատկություններով.

ա) Հոգնակի թվի կազմություն «ք» - ով:

բ) Գրաբարյան մեք, նոքո, նոցա, յուր, յուրյանց դերանունների օգտագործումը:

դ) Սահմանական եղանակի ներկա ժամանակի հոգնակի թվի կազմութ-
յան գրաբարայտուն ձևով:

դ) Սահմանական եղանակի անցյալ կատարյալի գրաբարյան ձևերի օգ-
տագործմամբ:

ե) Գրաբարյան հոգնակի սեռական, տրական հոլովաձևերի կիրառմամբ
(պարսկահայոց, հասարակութանց):

զ) Հոգնակի թվի սեռական հոլովում «ու» հոլովիչով (վեպերու, գարե-
րու, որը սարածված է նաև արևմտահայերենում):

է) Հոգնակի թվի կրկնակի մասնիկներով կազմության ձևերով:

ը) Օժանդակ բայի նախադաս կիրառությամբ (էինք պատրաստել):

թ) Գրաբարյան բաղմաթիվ բառերի, քերականական ձևերի օգտագործ-
մամբ (ինչպես՝ կացուցանել, վերա, դի և այլն):

ժ) Խուսական և եվրոպական բառերի անհարկի օգտագործմամբ (ռո-
ման, լիտերատուրա, մուգա և այլն)⁴:

Լեզվաոճական նման յուրահատկությունները հատուկ են ոչ միայն ողջ
«Առաջաբանին», այլև, որոշ վերապահությամբ, «Սալբի» վեպին: Այսպես.
«Դժվար է գուշակել, թե քանի բոլորակ գարեր անցել էին պարոն Հովասա-
փի մահից, երբ նրա թոռնիկներից մեկը, լուսահոգի ինջիկը, հոժարացավ
աղատել դեկի գերիին, միայն այն պայմանով, որով ինքը կամ յուր որդի-
քը կարողանային փրկել բոլոր գիվահարներին: Դեկի մայրը թեև գժվարու,
այսուամենայնիվ, ճարահատյալ ուսուցյց ինջիկին կախարդական ուսմուն-
քի գաղտնիքը և իրանց թագավորի ու թագուհու անունները, պատվեր
տալով. թև երբ որևիցե դեկին հրամայում էին այդ անուններով՝ խկույն
հալածական է լինում, իսկ երբ կանչում էին՝ տեսանելի կերպով երևան է
լինում և հնազանգվում է ամեն տեսակ ծառայությունների: Բայց ամենա-
սաստիկ երդում տվեց ինջիկին, որ այգ գաղտնիքը, բացի յուր որդիներից,
մի այլ մարդու չհայտնեին» (2,83, էջ 26-27): Այս հատվածը իր հիմնական
լեզվատարբերով համապատասխանում է թե՛ նախորդ հատվածի և թե՛
Հյուսիսսփայլյան լեզվի ոգուն: Կարծում ենք, որ «Հյուսիսսփայլ» ամ-
սադրի լեզվին հատուկ հիշյալ ձևաբանական յուրահատկությունների
հետ առկա են նաև լեզվական մի շարք առանձնահատկություններ ևս, ո-
րոնցից կարևորներն են՝

ա) Խոսքը ծավալուն, երկարաշունչ նախադասություններով կառուցե-
լը, որոնց մեջ աչքի են ընկնում բազմաբարդ ու ենթաստորադաս նախա-
դասություններ:

բ) Նախադասության ծավալուն, տրոհված անգամների առկայություն:

գ) Ճարբեր խոսքի մասերով արտահայտված միջանկյալ բառերի առկա-
յություն, որոնք խոսքը դարձնում են ձգձգված:

զ) Հարադրական բայերի գործածություն (հալածական է լինում, երևան
է լինում):

Այս ամենը հատուկ են ոչ միայն նշված հատվածին, այլև «Սալբի» վե-
պին ամբողջությամբ:

⁴ Լ. Կ. Ե. Գ. Կ. Ե. Ն. Րաֆֆու սակղծագործությունների լեզուն և ոճը. Երևան, 1975,
էջ 32

Թեև «Առաջաբանին» և վեպին ընդհանրապես հատուկ է խոսքի ծավալունությունը, այնուամենայնիվ, լեզվական նյութի առումով, դրանք զգալի չափով տարբերվում են միմյանցից: Խոսքը մասնավորապես վերաբերում է վեպում գրաբարյան բառաձևերի ու արտահայտությունների բեռնաթափմանը, ինչպիսիք են՝ ա) գրաբարյան նոցա, նոքա, մեք, բ) սահմանական եղանակի ներկա օժանդակ բայի եմք և անցյալ կատարյալը իմք (հորինեցիմք) վերջավորություններով կազմություններին և այլն: Սա նշանակում է, որ վեպը, «Հյուսիսսահայլի» և «Առաջաբանի» համեմատությամբ, զգալի չափով բեռնաթափվել է գրաբարյան և գրաբարխառն լեզվատարրերից: Այս երևույթը ստիպում է մտածել, որ Հյուսիսսահայլյան ավդեցություն շրջանում անգամ գրողը չի տեսնես լեզվի մշակման, կանոնավորման հարցերը:

Ստեղծագործության մեջ գործածված լեզվի ճակատագրի որակական խնդրում էական նշանակություն ունեն նաև վեպը գրելու և հրատարակելու տարբերվելը: Եթե այս հանգամանքը երկի գրականագիտական ուսումնասիրության տեսանկյունից կարող է արժեք չունենալ, ապա լեզվական իրողությունների քննության առումով կարևորվում է: Բանն այն է, որ ստեղծագործության հրատարակման ժամանակ տվյալ երկը հեղինակի կողմից հանգամանորեն մշակվում և լեզվական որակով համապատասխանեցվում է ժամանակի լեզվի մակարդակին: Մեր ասածի լավագույն ասպարեցույց կարող է լինել «Սալբի» վեպը: Կարծում ենք, որ վեպի գրաբար լեզուն աշխարհաբարացվել է հենց «Հյուսիսսահայլի» լեզվական ավդեցությամբ: «Երկար ժամանակ փափագում էի տեսնել մի այնպիսի օրագրի հրատարակություն, որի մեջ ճշգրտությամբ պատկերանային հայոց ազգի վերքը և նոցա բժշկության համար գործադրելի հնարները: Տա աստված ընդ երկար տևել «Հյուսիսսահայլ»-ին հօգուտ մեր հայրենիքի»⁴, – գրում է Րաֆֆին: Սա նշանակում է, որ ապագա մեծ վիպասանի ստեղծագործություններում առաջին անգամ գործածված աշխարհաբարը պետք է եղած լինի Հյուսիսսահայլյան աշխարհաբարը, և դա, իսկապես, այդպես է:

Ստ. Նազարյանցը «միջամտել» է նաև Մելիք-Հակոբյանի «Աղթամարա վանքը» ուսումնասիրության բնավրին, ինչպես տեղեկանում ենք Րաֆֆու 1861 թ. Հովհաննես Քաթանյանցին գրած նամակից. «Դարձյալ շնորհակալ եմ պարոն Նազարյանցին առավել հույս պատճառ, պատվել է մեր գրվածքը տպելով յուր պատվական օրագրի մեջ, մանավանդ մշակելով նորա թերությունքը» (ընդգծումը – Ռ. Ա.) (10, 72)⁵:

Հայտնի է, որ Րաֆֆու առաջին արձակ ստեղծագործությունը՝ «Աղթամարա վանքը» ակնարկը, գրողի անդրանիկ գործն է, որը տպվել է «Հյուսիսսահայլ» ամսագրի 11-րդ համարում: Առաջին հայացքից թվում է, թե շարադրված է հենց ամսագրի ոճով: Բայց երբ վեպի լեզուն համեմատում ենք «Հյուսիսսահայլի» լեզվի հետ, ապա, ինչպես նշվեց վերևում, դրանց միջև նկատվում են զգալի տարբերություններ: Ո՞րն է դրա պատճառը: Բանն այն է, որ Րաֆֆին իր կենդանության օրոք մի քանի անգամ ձեռ-

⁴ «Հյուսիսսահայլ», Մոսկվա, 1860, հ. 11:

⁵ Ր ա ֆ ֆ ի. Երկերի ժողովածու տասը հատորով. հ. 1, Երևան, 1983–1991 (այսուհետև օրինակները տեքստում առաջին թիվը ցույց է տալիս հատորը, երկրորդը՝ էջը):

նարկում է իր վեպի տպագրության դորձը, սակայն հեղինակին այդպես էլ չի հաջողվում իրականացված աեսնել իր երազանքը: Այդ առթիվ Ս. Սարինյանը գրում է. «Սալբի» վեպը, որը հայտնի է նաև «Խլվիկ» անունով, Բաֆֆու առաջին ծավալուն երկն է, որը, սակայն, լույս չի տեսել հեղինակի կենդանության օրոք: 1863 թ. վեպի ձեռագիրն ուղարկվում է Ստ. Նազարյանցին՝ «Հյուսիսսփայլում» տպագրելու համար: Սակայն ամսագիրը դադարեցվելու պատճառով չի իրականանում Բաֆֆու ցանկությունը: 1868 թ. Ստ. Նազարյանցը նորից է պահանջում վեպը՝ իր ձեռնարկած «Լրաբեր Հայաստանի» օրաթերթում տպագրելու, սակայն օրաթերթի հրատարակությունը չի իրականանում և վեպը նորից մնում է անտիպ»⁶:

Տրամաբանական է, որ վեպի հենց այդ ձեռագրերի լեզուն պետք է լիներ Հյուսիսսփայլյան, որովհետև այդ տարիները համապատասխանում էին գրողի «Հյուսիսսփայլի» լեզվով ոգևորված լինելու շրջանին: «Ինականաբար, — գրում է Լ. Եղեկյանը, — Բաֆֆու սկզբնական շրջանի ստեղծագործություններին պետք է հատուկ լինեին հիշյալ (Հյուսիսսփայլյան՝ Ռ. Կ.) լեզվաոճական իրողությունները: Այս բանը հատկապես նկատելի է նրա «Սալբի» վեպում...»⁷:

Հետագայում՝ սկսած 70-ական թվականներից, երբ սկսում է հրատարակվել Գր. Արծրունու «Մշակը», Բաֆֆին աշխատակցում է այս լրագրին, և նրա առաջին իսկ համարներում սկսում են տպագրվել գրողի ճանապարհորդական տպավորությունները:

Այս շրջանում Բաֆֆին վեպի ապագրության ուղղությամբ կատարում է մի փորձ ևս, սակայն այդ փորձը նույնպես անհաջողության է մատնվում, «...որովհետև, իրոք, նախատակահարմար չէր եռահատոր վեպը տեղագրել շաբաթաթերթի սուղ էջերում»⁸: Բայց վեպը «Մշակում» տպագրելու ձգտումը կարևոր նշանակություն է ունենում հենց վեպի լեզվական ճակատագրի համար: Բանն այն է, որ հեղինակն իր գործը տպագրելուց առաջ, բնականաբար, անդրազարձել է նրա լեզվաոճական որակին և լեզվական մանրամասն մշակման ենթարկել այն: Այստեղից էլ առաջացել են այն տարբերությունները, որ կան «Հյուսիսսփայլի» և «Սալբի» վեպի լեզվական ատաղձի միջև, թեև լեզվական դրսևորման բուն ոգին երկու դեպքում էլ նույնն է՝ վերամբարձ, երկարաչունչ, ձգձգված: Վեպի լեզվական փոփոխությունները հիմնականում տեղի են ունեցել Հյուսիսսփայլյան լեզվաձևերի՝ գրաբարյան բառերի ու դարձվածքների անհարկի գործածության բեռնաթափման ուղղությամբ: Բերենք մեկական հատված «Առաջաբանից» և բուն վեպից. «Պարսկահայաստանի մեջ ավելի վատթար է քրիստոնյա ազգերի դրությունը: Նոքա, ըստ մեծի մասին բնակվելով գյուղորայքում, մշակում են կալվածատիրոջ հողը, խիստ փոքր վաստակ միայն շահելով, յուրյանց տերերի ամբարները լցուցանել են հետո: Բայցև այդ փոքրիկ վաստակը, նոցա արյունախառն քրտինքների վարձը խիստ սակավ ձեռնատու է լինում նոցա ապրուստի համար: Վասնզի շիևտյան մահապալկունների շարյաթը, միանգամայն պիղծ համարելով

⁶ Ս. Ս ար ի ն յ ա ն. Բաֆֆի. Երևան, 1957, էջ 38:

⁷ Լ. Ե գ ե կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 31:

⁸ Ս. Ս ար ի ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 38:

քրիստոնյայքը, արգելում է նոցա հետ ամենայն տեսակ հաղորդակցութ-
յուն: Այդ պատճառով քրիստոնյայք չէին կարող վաճառել մահմեդական-
ներին յուրյանց երկրագործության հում բերքերը և յուրյանց մշակութ-
յունների բոլոր թաց պտուղները: Եվ եթե պատահում էր մի այդպիսի բան,
այն ևս գաղտնի և ամենայն զգուշութամբ, երբ մի մահմեդական, մեղան-
չելով ընդդեմ յուր շառիաթին և, խաբվելով չափազանց աժանությունից,
խիստ թեթև գնով գնում էր քրիստոնյա վաճառողից նրա մշակությանց
պտուղները» (2, 11):

Ինչպես երևում է բերված հատվածից, լեզվական ընդգծված ձևերը,
խոսք կառուցելու ձգձգված եղանակը, վերամբարձ ոճը ստեղծում են այն-
պիսի տպավորություն, որը հատուկ է «Հյուսիսսահյալ» ամսագրի լեզվին:
Իսկ նման ոճն առաջին հերթին առաջացել է գրաբարյան լեզվաձևերի ա-
վելորդ գործածությունից: «Սալբի» վեպի մշակման ժամանակ զգացվում է
նման գրաբարյան ձևերի սակավացում: Այսպես. «Ռոստոմի առանձնա-
տունը շինված է պարսկական ճաշակով և թույլ լուսավորված երեք պա-
տուհաններով: Ներս մտածին պես տեսողության հրապուրող առաջին ա-
ռարկան հանդիպակաց պատի երեսից հպարտ քարշ ընկած եվրոպական
երկփողանի հրացանն է: Մի այլ հրացան, Ղրիմի գործ, մի քանի զույգ
ասրճանակներ, կարգով դրված է նրա մոտ: Սենյակի պատի մյուս ճակա-
տից արծաթ գոտուց կախված է ահագին խորասանի թուրը լեզգու երկսայ-
րի խանչալի հետ և զանազան ձևերով վառողի և գնդակների ամաններ:
Դրանցից ոչ այնքան հեռու, մի անկյունում, հանդարտ թեք են ընկած
լայնեզր վահանը, պատերազմական կացնի հետ: Մյուս անկյան մեջ, դռան
մոտ տեղավորված են ձիու թամբը, սանձը և այլ պիտույքները՝ իրանց
պարագաներով: Սենյակի պատերի վրա, ուր հատուկ է բոլոր սեփական
տներին, կան զուգահեռաբար բաժանված դասարաններ, որ լի են տիրոջ
ճաշակը ցույց տվող այնպիսի առարկաներով, որոնց զարդ են կազմում
Ռուստոմի ընթերցման ամենասիրելի գրքերի հատորները...» (2, 156):

Ինչպես երևում է բերված հատվածից, գրաբարյան անհարկի գործած-
վող բառաձևերն ու բառակապակցությունները, որոնք սփռված էին «Ա-
ռաջաբանում» և «Հյուսիսսահյալի» լեզվում, այլևս գոյություն չունեն
բուն վեպում, լեզուն ձեռք է բերել ժամանակակից նորմավորված գրական
հայերենին զգալի նմանություն: Նշանակում է, որ այս շրջանում Րաֆ-
ֆուն դարձյալ մտահոգել է արևելահայերենի մշակման, կանոնավորման
հարցը: Սա չափազանց կարևոր մի շրջան է այն առումով, որ գրական
արևելահայերենի մշակման երկրորդ ուղղության ներկայացուցիչների՝
մասնավորապես Րաֆֆու ստեղծագործություններում, հայերենը ձեռք է
բերում նորմավորվածության ընդհանուր մի այնպիսի աստիճան, որն
արևելահայերենի զարգացման հետագա ընթացքի համար նշանակալի դեր
է ունենում:

Պարզենք, թե ինչպիսի՞ ընդհանուր փոփոխություններ են տեղի ունե-
ցել այս շրջանում: Հայտնի է, որ լեզվի մշակման առաջին ուղղության
ներկայացուցիչները՝ Պռոշյան, Աղայան, հետագայում նաև Թումանյան
(վերջինս այդ ուղղության դասական ներկայացուցիչն է համարվում),
արևելահայերենի լեզվամշակումը տանում էին լեզվի մեջ ժողովրդախո-

սակցական, երբեմն նաև բարբառային տարրերն ու ձևերը լայնորեն գործածելու ուղղութեամբ, որը լեզվին պետք է հաղորդեր կենդանի, ճկուն, պատկերավոր բնույթ: Փաստորեն այդ ուղղութեան ներկայացուցիչների կողմից ջանք չէր խնայվում, որքան հնարավոր է, իրար մոտեցնել արևելահայերենի գրավոր և բանավոր տարբերակները:

Հետագայում անդրադառնալով այդ հարցին և մտահոգություն հայտնելով՝ Թումանյանը նշում է, որ արևելահայերենը, 60-ական թվականներին սկսած, մշակվում է նաև «գաղութներում», և այդ մշակմանը մասնակցում էին՝ Ստ. Նազարյան, Միք. Նալբանդյան, Գր. Արծրունի, «... որոնք կարված էին հայերենի հողից ու լեզվի աղբյուրից: Եվ էս մարդիկ, որոնք միանգամայն անտեղյակ էին թե հայ լեզվին, թե հայ կյանքին, որոնց վիճակվել էր, սակայն, թե հայի վիճակը տնօրինել և թե նրա գրական լեզուն հորինել՝ գործի անցան»⁹: «Եվ ի՞նչ դուրս եկավ վերջի վերջո: Էն, որ ամեն մի գյուղացի խոսել, արտահայտվել գիտի, բայց հայ ինտելեկտներ, նույնիսկ հայ գրողն ու հպաստարկախոսը չեն կարողանում իրենց միտքը պարզ ու կանոնավոր հայտնեն: – Ինչու: Որովհետև բերաններումը լեզու չկա: Երեխան դպրոց մտնելիս կարգին խոսում է իր մայրենի բարբառով, որովհետև էդ բարբառը կենդանի ու հյուսվածի մի լեզու է, հողի է, շունչ է, իսկ դպրոցն ավարտելուց հետո չի կարողանում մի քանի նախադասություն իրար անի: Որովհետև էդ մայրենի բարբառը խլել են, ու անդը տվել մի քառու, չոր բառերի անկարգ ու մեռած մի շարան, որ բնավ կենդանի մտքի արտահայտություն չեն կարող դառնալ»¹⁰ (ընդգծումը մերն է՝ Ռ. Ա.):

Որքան էլ ճիշտ լինի Թումանյանը, որքան էլ «չոր ու ցամաք» թվա «հայերենի հողից ու լեզվի աղբյուրից» կտրված մարդկանց կողմից մշակվող լեզուն, այնուամենայնիվ, արևելահայերենը հետհյուսիսափայլյան շրջանում և այնուհետև մինչև մեր օրերը, գնաց լեզվի մշակման երկրորդ ուղղութեան ներկայացուցիչների նշած ճանապարհով, և, ի վերջո, հաղթանակ վերապահվեց հենց այդ ուղղութեանը¹¹:

Մինչև XIX դ. 70-ական թվականները Րաֆֆու կողմից մշակված ու գործադրված աշխարհաբարը կարելի է համարել նոր հայերենի նորմավորման առաջին շրջանի արգասիք: Այս շրջանում հայերենում տեղի ունեցած փոփոխություններից կարելի է նշել հետևյալները: Նախ՝ Րաֆֆու շնորհիվ վերջնականապես կանոնավորվում են դերանվանական էս, էդ, էն և սրանցով կազմված էսպես, էսքան և այլ ձևեր՝ փոխարինվելով այս, այդ, այն, այսպես, այսքան և այլ ձևերով, որոնք կարելի է համարել արևելահայերենի նորմավորման լուրջ փոփոխություններից:

60-ական թվականներին Րաֆֆու ժամանակակիցները (նաև լեզվի նորմավորմամբ մտահոգված անհատներ) իրենց ստեղծագործություններում այս ձևերի նկատմամբ ցուցաբերում էին անհետևողական վերաբերմունք՝ օգտագործելով թե՛ առաջին, թե՛ երկրորդ շարքի ձևերը, իսկ Րաֆֆին իր

⁹ Հ. Թ ու մ ա ն յ ա ն. Երկերի ժողովածու. Հ. 6, Երևան, 1959, էջ 162:

¹⁰ Նույն տեղում, էջ 161:

¹¹ Տե՛ս Ռ. Ա. Ի շ ի ա ն յ ա ն. Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն. Երևան, 1978, էջ 195–196, Գ. Զ ա հ ու կ յ ա ն..., նշվ. աշխ., էջ 34:

ևրկերում բացառապես դործածում է դերանվանական այս, այդ, այն և սրանցից կազմված մյուս ձևերը: Այսպես՝ Աղայանը, դերանվանական այդ ձևերի դործածության հարցում խիստ անհասկողական է զանվել՝ գործածելով թե՛ այս... և թե՛ էս... ձևերը, ընդ որում՝ այս... և նման ձևերի գերակշռություն՝ հեղինակային խոսքում, իսկ էս... և այլն՝ հերոսների:

Բաֆֆու վաղ շրջանի ստեղծագործություններից և հատկապես «Սալբի» վեպից սկսած՝ հայ գրական լեզվում և մանավանդ դեղարվեստական արձակում վերջնականապես նորմավորվում են դերանվանական այդ գույնաձևերը. այս, այդ, այն... դուրս մղելով էս, էդ, էն... ձևերը և լիիրավորեն հաստատվում արևելահայերենում: Այսպես՝ «Եթե պարոն Աշխարհունին բացակա լիներ այնտեղից, Ռոստամը... կպատասխաներ (2, 164): Եվ իրավ, եկույր այդպիսի ընդունակություններով օժտված սես Վասակյանն էր» (2, 165), «Ասիական այդ նվազարանի ճնգճնգոցը դարձյալ վառեց նրա երևակայությունը» (2, 170), «... և այդ սարերի հրաշալի սլատկերներն այնքան շռայլ...» (2, 172), «Նա անցավ այն վրանների մոտից» (2, 173) և այլն: «- Դուք դիտեք, - շարունակեց Հուրի Խան-Դայան, - որ այդ տիրոջ իմաստուն պաշտոնյան նրա տիրությունների և ուրախությունների կարեկիցն էր: Այս գալիք մեծ պահոց միջինքին կլրանա քսան և հինգ տարին» (2, 177), «- Եվ եթե այդ հիվանդության վերջը աստուծո հաջողությամբ մի բարի մահով սլակվի, այն ժամանակ դուք առիթ չեք ունենա դանդատվելու...» (2, 180): «...Ես ախտսում եմ, որ այդպիսի քանքարավոր բնավորության սերը մնա առանց ուսման...» (2, 183), «Ներեղություն, - ասաց նա, - ես ձեզ երկար սպասել սովի. այս դիշեր սլարոն դուրսը չկամեցավ շուտ գալ» (2, 189), «Կորեք այսաեղից...» (2, 199), «Գերիների վիճակը միշտ այդպես է» (2, 201), «...Բայց այսքանը գիտեմ» (2, 205), «Լեզուն արտասանում է այն, ինչ բանով որ լցված է սիրտը» (2, 206) և այլն: Օրինակները կարելի է շարունակել, բայց բերվածներն էլ բավական են ցույց տալու համար, որ այս այդ, այն և սրանց հիմքից կազմված դերանունները գործածվում են ոչ միայն հեղինակի, այլև հերոսների խոսքում: Այս երևույթը, սկսվելով «Սալբի» վեպից, անցնում է հեղինակի ողջ ստեղծագործության միջով, և հերոսների խոսքի տիպականացումը բարբառային կամ խոսակցական բառապաշարային միջոցներով բնավ էլ պարտադիր չի դառնում. ինչպես իր սեփական փորձով հաստատում է հեղինակը. այստեղ ախպականացման ասպարեզում մեծ դեր են խաղում այլ կարգի հանգամանքներ (հերոսի սոցիալական ծագումը, կրթական մակարդակը, աշխարհայացքը, կենսափորձը և այլն), որոնք պակաս կարևոր չեն հերոսների խոսքի տիպականացման համար¹²:

Այս, այդ, այն և սրանից կազմված դերանվանական մյուս ձևերին նախապատվություն տալը, որը գրողի լեզվազգացողության լավագույն բնութագրականն է, ցույց է տալիս, որ բոլոր այն դեպքերում, երբ լեզվի նորմավորման ճանապարհին խոսակցական այս կամ այն ձևը չի համապատասխանում գրողի լեզվական ճաշակին, նա դիմում է գրաբարին, որպես գլխավոր ձևով իր ինքնությունը հաստատած տարբերակի, և շատ զուգորեն ընտրում լեզվական այս կամ այն միավորը և առաջնությունը

¹² Հմմտ. Լ. Ե զ Ե կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 114-156:

վերապահում այդպիսի ձևերին: Այսպիսի փաստերի հանդիպում ենք ոչ միայն գերանվանական հիշյալ ձևերի գործածություն մեջ, այլև ժողովրդահոսակցական լեզվից վերցված այնպիսի բառերում, որոնք ձևավորվել են գրաբարյան ձևերից՝ Հնչյունափոխության միջոցով: Խոսքը մասնավորապես վերաբերում է հայր, մայր, այծ, գայլ, այլ, ծայր և նման բառերին, որոնց մեջ երկհնչյունի դիմաց խոսակցական լեզուն ունի է ձայնավորը: Փաստորեն այդպիսի բառերը ձևավորվել են այժ Հնչյունափոխության միջոցով, ինչպես ձայն-ձեն, սայլ-սել և այլն: Սա նշանակում է, որ աշխարհաբարի կանոնավորման ճանապարհին չեն պահպանվել բարբառի Հնչյունափոխության այն կանոնները, որոնք չեն եղել հին դրական լեզվում, այդ պատճառով բարբառային բառաձևերը դրական կերպարանք են ստացել¹³:

Ընդհանրապես պետք է ասել, որ լեզվի վրտկանայման չափազանց ցայտուն արսահայտություն է բառերի մեջ այնպիսի երկհնչյունների վերականգնումը, որոնք խոսակցական լեզվում փոխված են եղել պարզ ձայնավորի: Բաֆֆին լեզվի գրականացումը տեսնում է բառերի ու դրանց ձևերի երկհնչյունավոր պատկերի վերականգնման մեջ: Այսպես, երբ Աղայանը գրում էր «Մարիամը ինձ իրա աչքի լսի պես էր պահում»¹⁴, «Լըզողլան անուն են տալիս գեղըցիք» (ՀԴԳ, 266) և այլն: «Ասում են մթնի մեջ ավելի վառ է լինում մարդու երևակայությունը, քան թե լուսի» (ՀԴԳ, 268), «Իմ հայրը էստեղ է» (ՀԴԳ, 270), «Մեկը ձիուց կամ ծառից վեր է բնկել, մեկը սելի տակով է էլել» (ՀԴԳ, 258), «Մեր դնդաղիք... կոպիտ մարդիկ են» (ՀԴԳ, 254) օրինակներում, ընդգծված ձևերի բարբառային ու խոսակցական բնույթն ակնհայտ է: Բաֆֆին այդպիսի ձևերը փոխարինում է մշակված, նորմավորված ձևերով: Օրինակ՝ «Ես նրան կսաղմ իմ աչքի լուսի պես» (2, 110), «Գյուղի բոլոր տանիքների վրա տեսանելի էր կրակավառության արարողությունը» (2, 110), «Այգ հետաքրքրական տեսարանները ավելի կենդանացնում էր զուռնան, որ յուր զիլ և բարակ, ճլվլուն ձայնով գհոլի և դահրայի հետ նվագում էին...» (2, 111), «Դուք կարծում եք ամուսին այրերը այնտեղ այնպես են, որպես մեզանում» (2, 128): «Տիկին Սկուհին համբուրեց օրիորդի գլուխը և ուրախ եղավ...» (2, 231) և այլն:

Ընդգծված այս ձևերը նախորդ խոսակցական ձևերի համեմատությամբ, գրական են, նորմավորված նաև մեր այսօրվա հայեցակետից: Սա նշանակում է, որ ՆՕ-ական թվականներին Բաֆֆու կողմից գրական արևելահայերենի նորմավորման եզանակը նշանակում էր լեզվական խոսակցական ձևերի փոխարինում գրաբարատիպ այնպիսի միավորներով, որոնք ընդունելի էին և հասարակական որոշ շրջաններում նաև գործածական: Փաստորեն, դա յուրօրինակ «գրաբարացում» է: Բայց արդյո՞ք գրաբարացում: Եթե իսկապես այդպես լիներ, ասպ դուրս կգար, որ Բաֆֆին դեմ է գնում լեզվի զարդացման զիալեկտիկական ընթացքին (իհարկե, մեր

¹³ Ս. Ղ. ա գ ա ղ ա ն. Հայոց լեզվի համառոտ պատմություն. Երևան, 1954, էջ 370:

¹⁴ Ղ. Ա գ ա ղ ա ն. Երկեր. - Հայ դասականների գրադարան (այսուհետև տեքստում՝ ՀԴԳ). Երևան, 1979, էջ 266:

այսօրվա հայեցակետից), և նրա աշխարհայացքը կդիտվեր սահմանափակ, իսկ գործը՝ անպտուղ:

«Սալբի» վեպում արևելահայերենի մշակման և նորմավորման նկատմամբ Րաֆֆին երկակի մոտեցում ունի: Նախ՝ ինչպես ցույց տրվեց վերևում, այստեղ հեղինակը հրաժարվում է գրաբարյան այնպիսի ձևերից ու արտահայտություններից, որոնք տիպական էին թե՛ մեր հին գրավոր լեզվին և թե՛ Հյուսիսսփայլյան հեղինակներին ու «Հյուսիսսփայլին»: Այդպիսիք էին սորա, գորա, նորա, մեք, գրում եմք և շատ ուրիշ ձևեր, մյուս կողմից՝ լեզվի նորմավորման ճանապարհին երբեմն-երբեմն ժողովրդախոսակցականի փոխարեն օգտագործվում են գրաբարյան ձևեր: Բանն այն է, որ հեղինակը երբեք էլ կողմնակից չի եղել ո՛չ լեզվի գրաբարացմանը և ո՛չ էլ գրաբարյան բառերի ու բառաձևերի կենդանացմանը: Րաֆֆին կողմ է լեզվի նորմավորմանը ու նրա պրակտիկ մշակմանը, և դա պարծնականորեն ցուցադրվում է «Սալբի» վեպում:

XIX դ. երկրորդ կեսից սկսած արևելահայերենի մշակումն ու նորմավորումը, փաստորեն, համաժողովրդական մտահոգություն էր, և արևելահայ աշխարհաբարն իր ճանապարհը հարթում էր ժողովրդի միջոցով: Որպես տվյալ լեզվի բանավոր հաղորդակցման տարբերակ, լեզվից դուրս էին մղվում բոլոր այն ձևերը՝ գրաբարյան և ոչ գրաբարյան, որոնք անկենդան էին, ոչ կենսունակ, փոփոխվում էին բառերի նախկին իմաստները, նոր իմաստներն արմատավորվում էին հնչյունական նոր կազմով, և այն ամենը, ինչը չէր համապատասխանում լեզվամշակման ժողովրդական զգացողությունները, դուրս էր մղվում լեզվից, մնում էին այն ձևերը, որոնք բունում էին ժամանակի քննությունը: XIX դ. 60-ական թվականներից սկսած՝ նույն բովանդակությունը լեզվական մի քանի ձևերով արտահայտելը սովորական երևույթ էր: Ստեղծվել էր լեզվական զուգաձևությունների, բազմաձևությունների մի քառս: Այդ քառսից անհրաժեշտ էր ընտրել, լույս աշխարհ հանել և «քաղաքացիություն» տալ լեզվական այնպիսի ձևերի, որոնք համապատասխանում էին ժամանակի լեզվամտածողությանը, լեզվազգացողությանը:

Րաֆֆին վերցնում էր լեզվական այնպիսի ձևեր, որոնք հեղինակի լեզվազգացողությամբ գրական էին, բայց ոչ՝ գրաբար, ժողովրդի լեզվական սեփականությունն էին, բայց ոչ՝ ժողովրդախոսակցական: Այսպես, բերենք մի հատված՝ մեր ասածը հաստատելու համար: «Տեր Մարկոսի երեսը մռայլվեց. նա տհաճությունից կրծում էր յուր շրթունքը. նա ավելի կատաղեց այն բանի համար, որ եկվորները ուշադրություն չդարձրին այնտեղ հոգևոր անձինք լինելու վրա և չասացին «օրհնեցեք տյարք»: «Նա ավելի ուրախ կլիներ, եթե երկու սատանա մտնեին նրանց ժողովը, քան այդ երկու նրա համար անտանելի անձերը: Բայց մյուս կողմից նա խիստ ուրախ էր, որ նրանք եկան խորհուրդը վերջացնելուց հետո, եթե ոչ, չարաչար կվնասեին նրանց օգտին: Տեր Մարկոսը, յուր սև փիլոնի հետ ստացած լինելով և մի սև ու կեղտոտ հոգի, մի կեղծավոր մարգահաճություն, ծածկեց յուր սրտի ոխը...» (2, 141): Ինչպես երևում է, շրթունքը, յուր, անձինք բառաձևերը գրաբարյան ձևեր են, բայց այնպիսիք, որ ժողովուրդը յուրացրել է որպես գրական լեզվամտածողության բառապաշարի օգտագոր-

ծնլի տարրեր: Այդպիսի ձևերը իրենց լեզվական քաղաքացիությունը որակով տարբերվում են, ասենք, գրաբարյան այնպիսի ձևերից, ինչպիսիք են սորա, Կորա, մեք և այլն, որոնք ժողովուրդը դուրս է մղել իր բառապաշարից՝ որպես անկենդան, ժամանակաշրջանի համար անընդունելի ձևեր: Երբ խոսում ենք «Սալրի» վեպում լեզվի «գրաբարացման» մասին, ապա նկատի ունենք Հեղինակի կողմից ազգային լեզվում գոյություն ունեցող, ընդունելի գրաբարատիպ այնպիսի ձևերի գործածում, որոնք համապատասխանում են ժամանակի լեզվազգացողությանը:

Այսպիսով, լեզվի մշակումն ու նորմավորումը Րաֆֆին կատարում էր առաջին հերթին հաշվի առնելով գրական լեզվամտածողությունը, այդ ընթացքում էլ այնպիսի ձևերը, որոնք բարբառային ու ժողովրդախոսակցական էին և կամ ինչ-ինչ պատճառներով չէին համապատասխանում գրողի լեզվազգացողությանն ու լեզվական ճաշակին, փոխարինվում էին կենդանի լեզվում գոյություն ունեցող գրաբարատիպ զուգահեռ միավորներով: Այդպիսի փոփոխությունները հանվեցրին նրան, որ մեծ գրողի ստեղծագործության մեջ գործածված լեզուն զգալիորեն հեռացավ ժամանակի խոսակցական տարբերակից և հանդես եկավ որպես լեզվական նոր որակ:

Րաֆֆու լեզվում, փաստորեն, ի մի էին բերվում, ամփոփվում լեզվական այնպիսի ձևեր, որոնք հիմնականում պատկանում էին լեզվի բանավոր տարբերակի սլասսիվ շերտերին և համեմատաբար սակավ էին գործածվում, այն էլ՝ հիմնականում մտավորականության շրջանում: Այս հանգամանքը հանգեցնում է այն բանին, որ ստեղծվում է մի տեսակ լեզվական արհեստականություն, այսինքն՝ լեզվական մի որակ, որն իր բառապաշարային նյութով, տեղ-տեղ նաև քերականական որոշ ձևերով հեռանում է տվյալ ժամանակաշրջանի լեզվի բանավոր խոսակցական տարբերակից և գեղարվեստական խոսք կառուցելու ասպարեզում թողնում մի տեսակ «անհարադատություն» տպավորություն¹⁵: Բայց որքան էլ տարօրինակ է, երբ այսօր հայացք ենք գցում արևելահայ գրական լեզվի անցած պատմական ուղուն, նկատում ենք, որ արևելահայերենը մշակվել ու դրական լեզու է դարձել խոսակցական տարբերակի նկատմամբ հենց այդպիսի «անհարադատություն» ձևեր բերելու ճանապարհով, այսինքն՝ որքան հնարավոր է՝ հեռանալով լեզվի խոսակցական տարբերակից, ընտրելով գրքային, համեմատաբար քիչ գործածվող լեզվական առաղձ:

¹⁵ Հմմտ. Ռ. Ի շ խ ա ն ն. նշվ. աշխ., էջ 137–150.

РАФФИ И ЯЗЫК ВОСТОЧНОАРМЯНСКОЙ
ХУДОЖЕСТВЕННОЙ ЛИТЕРАТУРЫ*РОЛАНД АВЕТИСЯН*

Р е з ю м е

Восточноармянский ашхарабар, полностью вытеснив ко 2-й половине XIX в. грабар, развивался затем в двух направлениях – народно-литературный и рафинированно-литературный язык. Среди представителей второго направления развития ашхарабара выделяется великий армянский романист Раффи. Восточноармянский ашхарабар в произведениях Раффи к 80-м годам XIX в. поднимается до уровня нормированного, упорядоченного литературного языка. На этом пути язык великого романиста проходит три этапа языкового нормирования. В настоящей статье рассматриваются особенности первого, начального этапа.